

1.

ՊԱՐՏԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ DEONTOLOGICAL ETHICS

Ի՞նչ է՝ *պարտագիտական բարոյագիտությունը*:

Հայերեն *Պարտագիտականի* բառակազմությունը կու գայ *պարտք* եզրեն (յուն.՝ *déon*), որմէ՝ պարտաւորութիւն⁽⁵⁸⁾ եւ պարտագիտութիւն (*deontología* – դեոնտոլոգիա) բառակազմութիւնները, որոնք ներկայացուած են նաեւ որպէս հասկացութիւններ:

Պարտաւորութիւնը, մարդոց վրայ տարածուած բարոյական այն ներքին պահանջքն է, որ կը դառնայ նաեւ անհատին սկզբունքը (անգլ.՝ Principle, գերմ.՝ Prinzip). այս պատճառով, տեսութիւնը (պարտագիտական բարոյագիտութիւնը) կը կոչուի նաեւ՝ *սկզբունքային բարոյագիտութիւն*:

Արեւմտեան փիլիսոփայութեան մէջ բարոյագիտական այս տեսութեան գլխաւոր դէմքը կը հանդիսանայ՝ գերման փիլիսոփայ Իմմանուէլ Կանտ, որ իր պարտագիտական բարոյագիտութիւնը նաեւ կը կոչէ *ծեւական բարոյագիտութիւն* (Formal Ethics): Կանտի բարոյական սկզբունքը *ծեւական* է, որովհետեւ որոշ կացութեան մը չի վերաբերիր, այլ անկախ որեւէ կացութենէ եւ անկախ զանազան հանգամանքներէ, ան միշտ կը գործէ եւ միշտ ուժի մէջ կը մնայ:

Կանտ, բարոյագիտական իր տեսութիւնը կը հիմնէ *անպայմանական հրամայականին* (Categorical Imperative) վրայ, հետեւեալ բանաձեւով.-

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ), որով միաժամանակ կարենաս ցանկալ, որ այդ՝ ընդհանուր օրէնք դառնայ»:

Այլ խօսքով, մարդուն պարտաւորութիւնը կը ներկայանայ՝ գործնական բացարձակ հրամայականով, առանց որեւէ նախապայմանի կամ բացառութեան: Օրինակ, եթէ ճշմարտախօսութիւնը, որ ինծի համար անձնական կանոն (Maxim) մըն է եւ պետք է ընդհանուր *բարոյական օրէնք* դառնայ, ուրեմն ըստ Կանտի, որեւէ ստախօսութիւն (առանց բացառութեան) արգիլուած պիտի համարուի:

Կանտի բարոյագիտութիւնը հիմնովին *պարտագիտական* է, այսինքն՝ ոչ թէ մարդու հակումները, կարիքները, մղումները, զգացումներն ու հետաքրքրութիւնները կ'որոշեն անոր վարմունքն ու վարուելակերպը, այլ միայն ու միայն իր ներքին պարտաւորութիւնը: Կանտի համար վարմունքի մը պարտաւորութիւնը որքան զօրաւոր ըլլայ, այնքան աւելի բարոյական կը դառնայ:

(58) **Պարտաւորութիւն** (Duty) եւ **պարտագիտութիւն** (Deontology) հասկացութիւններու մասին, տե՛ս նաեւ Մաս – 9, Էջ 518: